**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-4/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 19.04.2017թ.

ժամը 11 [30] –ին

Մասնակիցներում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,

ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան,

ՀՀ ԶՈւ ԱՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, փոխգնդապետ Ս. Պետրոսյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

***«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ա.Բաղրամյան)

1. Տեղեկություններ հայտ/գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.

2 **«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-4/2»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա **«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-4/2»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա.Բաղրամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված **«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-4/2»** ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | Գորիսի «ԱՆԳ» ԲԲԸ |
| 2 | «Կամազ Արմենիա» ՓԲԸ |
| 3 | «ԿԱՊԱՆԻ ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ |
| 4 | «Լավ Ընկեր» ՍՊԸ |
| 5 | Մեժլում Գրիգորյան Ա/Ձ |
| 6 | «Ռեգնում» ՍՊԸ |
| 7 | «Ս|ագր» ՓԲԸ |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

**03.05.2017թ-ին հանձնաժողովը շարունակեց աշխատանքները**

**2 . «ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա.Բաղրամյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:
2.3 **Գորիսի «ԱՆԳ» ԲԲԸ-ի, «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ի, «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի և «Սլացք» ՓԲԸ-ի** հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են **«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԾՁԲ-4/2»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): **«Ռեգնում» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը սխալ է ներկայացված՝ մասնավորապես գնային առաջարկում ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի պահանջներին, ինչի հիման վրա գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը մերժել է: **«ԿԱՊԱՆԻ ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ**-ի կողմից ներկայացված հայտում որոշ պահեստամասերի միավորի գները լրացված չեն, ինչը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է: **Մեժլում Գրիգորյան Ա/Ձ-ի** կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ում նշված չէ չափաբաժնի համարը: Գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 25.04.2017թ-ին առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**Մեժլում Գրիգորյան Ա/Ձ-ի** կողմից անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվել, ինչի հիման վրա գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը մերժել է:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել **4** մասնակից.

| Չ/Հ | Բեռնատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ, այդ թվում՝ Չափաբաժինների անվանում | Նախահաշվով առաջարկվող միավորի գների հանրագումար | Մասնակիցների կողմից առաջարկված միավորի գների հանրագումար ըստ չափաբաժինների | | | | | | | | 1-ին տեղ զբաղեցրած մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | «Կամազ Արմենիա» ՓԲԸ | | «Լավ Ընկեր» ՍՊԸ | | «Սլացք» ՓԲԸ | | Գորիսի «ԱՆԳ» ԲԲԸ | | |
| | | | առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ով | առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ով | առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ով | առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ով | |
| 1 | ԿԱՄԱԶ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) | 8253174865 | 5531315286 | 6634377583 | — | — | — | — | — | — | «Կամազ Արմենիա» ՓԲԸ |
| 2 | ՈՒՐԱԼ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) | 2553447851 | — | — | 1708874470 | 2047866894 | — | — | — | — | «Լավ Ընկեր» ՍՊԸ |
| 3 | ԿՐԱԶ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) | 836167186 | — | — | 629915800 | 752942870 | — | — | — | — | «Լավ Ընկեր» ՍՊԸ |
| 4 | ԶԻԼ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) | 23114770 | — | — | — | — | 15837903 | 18548423 | — | — | «Սլացք» ՓԲԸ |
| 5 | ԳԱԶ-53/66. ԳԱԶ-3308/33081/ԵՎՐՈ/ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) | 28944958 | — | — | — | — | — | — | 21242555 | 21242555 | Գորիսի «ԱՆԳ» ԲԲԸ |

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.4 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**03.05.2017թ-ին հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:**

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Ա.Բաղրամյան)

4.1 **«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց 1-ին չափաբաժնում **«Կամազ Արմենիա» ՓԲԸ-ն, 2-րդ և 3-րդ** չափաբաժիններում **«Լավ Ընկեր» ՍՊԸ-ն, 4-րդ** չափաբաժնում **«Սկաքք» ՓԲԸ-ն**, 5-րդ չափաբաժնում **Գորիսի «ԱՆԳ» ԲԲԸ-ն**:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու **«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2»** ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ(եթե առկա է) զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Ա.Բաղրամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա.Բաղրամյան)

**«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2»** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

| | |
|---|---|
| **Գնահատող, (ԳԱՊ)** | Հ. Կարապետյան |
| **Գնահատող,** | Ա. Պետրոսյան |
| **Գնահատող** | Ա. Սիմոնյան |
| **Գնահատող** | Հ. Բարսեղյան |
| **Գնահատող** | Ա. Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Բաղրամյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ (ՇՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ**

19.04.2017թ.

ժամը 11 $^{30}$ –ին

**Բացողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Սալայան, ՀՀ ԶՈւ ՍՎ օպերատիվ բաժնի ավագ սպա, մայոր Ա. Աբրահամյան:

**Օրակարգը՝**

1. **«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2»** ծածկագրով ՇՀ ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ Մասնակիցների հայտը, որը սահմանված կարգով հաստատվել է և ներկայացվել է գնահատման հաջորդ փուլ.

- Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | Գորիսի «ԱՆԳ» ԲԲԸ |
| 2 | «Կամազ Արմենիա» ՓԲԸ |
| 3 | «ԿԱՊԱՆԻ ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ |
| 4 | «Լավ Ընկեր» ՍՊԸ |
| 5 | Մեժլում Գրիգորյան Ա/Ձ |
| 6 | «Ռեգնում» ՍՊԸ |
| 7 | «Ալացք» ՓԲԸ |

**Բացող** Ս. Սալայան

**Բացող,** Ա. Աբրահամյան